



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_

\_\_\_\_\_ 2012 թ.

Ա/Ձ Գևորգ Թոսունյանին

հասցե՝ Սյունիքի մարզ, ք.Քաջարան,

Շիրվանզադե 7/24

պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետ

պարոն Մ.Այվազյանին

Կից ուղարկվում է Ձեր 10.02.2012թ-ի գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 24.02.2012թ. թիվ 7/3 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/3

24 փետրվարի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Գևորգ Թոսունյանի 10.02.2012թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 03.02.2012թ. թիվ 1101530 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 20.01.2012թ. թիվ 1101530 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Գևորգ Թոսունյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.06.2011թ-ից մինչև 24.01.2012թ. ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 03.02.2012թ-ին կազմվել է թիվ 1101530 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300 000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ 24.01.2012թ-ին ժամը 13-05-ին հարկային տեսուչ՝ Արտակ Գալստյանի կողմից ք.Քաջարան, Աբովյան փող. հասցեում գտնվող Ա/Ձ Գևորգ Թոսունյանին պատկանող խանութից կատարվեց գնում ընդհանուր 800 դրամի չափով՝ 1 թթվասեր՝ 250 դրամ արժեքով և 1 տուփ <Մալբորո> տեսակի ժխախոտ՝ 550 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Գևորգ Թոսունյանի պատվաճառող Արմենուհի Առաքելյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 13-16-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 8967 դրամ ընդհանուր գումարով և հաշվարկվեց դրամակղում առկա գումարային մնացորդը, որը կազմեց 132300 դրամ:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին <<Հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 300 000 դրամի չափով: Նշված տուգանքը երկամսյա ժամկետում չվճարելու դեպքում կրկնապատկվում է:

Ա/Ձ Գևորգ Թոսունյանի գանգատում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ ժամանակավոր պաշտոնակատարի 20.01.2012թ-ի թիվ 1101530 հանձնարարագրի համաձայն, ք.Քաջարան, Աբովյան փողոցի վրա նոր բացված խանութում կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Ստուգում կատարելու պատճառը, ըստ Կապանի ՏՀՏ ղեկավարության, հանդիսացել է ոմն քաղաքացու թեժ գիծ զանգահարելը: Ստուգման արդյունքում 03.02.2011թ-ին կազմվել է թիվ 1101530 ակտը, որի վերաբերյալ առարկություն է ներկայացվել Կապանի ՏՀՏ պետին:

Հաշվի առնելով խանութի պատվաճառող Արմենուհի Առաքելյանի բացատրությունն այն մասին, որ նա տրամադրել է ՀԴՄ կտրոն, Ա/Ձ Գևորգ Թոսունյանը առարկում է ստուգման ակտը և խնդրում է համապատասխան ընթացք տալ, հետագայում նոր փաստեր ներկայացնելու համար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Գևորգ Թոսունյանի ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ իրականացված ստուգմամբ,

ըստ էության, չի հիմնավորվել Ա/Ձ Գևորգ Թոսունյանի կողմից ստուգման ակտով արձանագրված խախտումը կատարված լինելու հանգամանքը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Գևորգ Թոսունյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, իսկ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմինն հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից մշակվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման և հսկիչ գնման ուսումնասիրության ընթացքում իրականացվող գործողությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմվող, համապատասխանաբար՝ ստուգման ակտում և արձանագրությունում արտացոլման ենթակա տվյալների (տեղեկությունների) ընթացակարգ: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) <ՀՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև>-ը բաժնում հստակ նշված են, թե հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում ինչպիսի գործողություններ պետք իրականացվեն, իսկ ստուգման արդյունքում կազմվող ակտում ինչ տվյալներ (տեղեկություններ)՝ արտացոլվեն:

Շրջաբերական նամակի <ՀՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև>-ը բաժնում նշված է, որ վաճառողի կողմից համապատասխան վճարման արժեքը ՀՄ չմուտքագրվելու և ՀՄ կտրոն չտրամադրելու դեպքում ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ՀՄ-ից դուրս է բերվում <Z> հաշվետվությունը, կատարված վճարման արժեքը մուտքագրվում է ՀՄ, դուրս է բերվում կտրոն և կրկին անգամ դուրս է բերվում <Z> հաշվետվությունը:

Հիշատակված գործողություններն իրականացվելուց հետո գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողները պետք է ետ վերադարձնեն տնտեսվարող սուբյեկտին, կազմեն համապատասխան արձանագրություն, ինչպես նաև ետ ստանան գնման գումարը և տպեն վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Գևորգ Թոսունյանի մոտ իրականացված ստուգման ընթացքում շրջաբերական նամակով նախատեսված ընթացակարգը չի պահպանվել: Մասնավորապես, համապատասխան գնումը կատարելուց հետո ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ընդամենը ՀՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվությունը: Կատարված վճարման արժեքը չի մուտքագրվել ՀՄ, դուրս չի բերվել կտրոն և կրկին անգամ դուրս չի բերվել <Z> հաշվետվությունը: Բացի այդ, գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողները ետ չեն վերադարձրել տնտեսվարող սուբյեկտին, չեն կազմել համապատասխան արձանագրություն, ետ չեն ստացել գնման գումարը և կատարված վճարման արժեքի չափով չեն տպել վերադարձի կտրոն:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Գևորգ Թոսունյանը ժխտում է ստուգման ակտով արձանագրված խախտումն իր կողմից կատարված լինելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Գևորգ Թոսունյանի մոտ իրականացված ստուգմամբ, ըստ էության, չի հիմնավորվել վերջինիս կողմից ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները խախտվելու փաստը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 03.02.2012թ. թիվ 1101530 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ